Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

16651

ՏԵՂԵԿԱԳԻՐ

ՆԱԽԻՋԵՎԱՆ-ՇԱՐՈՒՐ-ԴԱՐԱԼԱԳԵԱՋ-ՍԱԼՄԱՍՏԻ

ԵՂԲԱՅՐԱԿԱՆ ՕԳՆՈՒԹԵԱՆ ԿՈՄԻՏԷԻ
1914-Ի ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 23-ԻՑ ՄԻՆՉԵՎ 1917-Ի
ՅՈՒՆՈՒԱՐԻ 1-Ը.

ԿԱԶՄԵՑ
Ս.ՅՈՎՍԷՓ—քարտուղար Ս.ՌԱՖԵԼ ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ

1916 թ. Դեկտեմբեր
ՍԱԼՄԱՍՏ

Ս.տրպաս. Հայոց Թեմ. տպարան

2010

2-42



Հ.Ս.Խ.Հ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱ
С.С.Р.А Публичная Библ
7/XI-1922
ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ Ա

370
Զ310-ՏԿ

ՏԵՂԵԿԱԳԻՐ

ՆԱԽԻՋԵՒԱՆ-ՇԱՐՈՒՐ-ԴԱՐԱԼԱԳԵԱՋ-ՍԱԼՄԱՍՏԻ

ԵՂԲԱՅՐԱԿԱՆ ՕԳՆՈՒԹԵԱՆ ԿՈՄԻՏԷԻ
1914-Ի ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 23-Ի ՄԻՆՉԵՒ 1917-Ի
ՅՈՒՆՈՒԱՐԻ 1-Ը.

1004
Կ.Ա.Տ.

ԿԱԶՄԵՑ
Անդամ—քարտուղար Առաքել Յարութիւնեան

1916 թ. Դեկտեմբեր
ՍԱԼՄԱՍՏ

Տպարան. Հայոց Թեմ. տպարան

2020

2002

ՏԵՂԵԿԱԳԻՐ

ՆԱԽԻՋԵՎԱՆ—ՇԱՐՈՒՐ-ԴԱՐԱԼԱԳԵԱԶ—ՍԱԼՄԱՍՏԻ ԵՂԲ. ՕԳՆՈՒԹ. ՍԿՍԵԱԼ 1914-Ի ԴԵԿՏ. 23-Ի 3 ՄԻՆՉԵՎ 1917-Ի ՅՈՒՆՈՒԱՐԻ 1-Ը.

1914 թուի դեկտեմբերին, Կովկասեան ճակատի Սարիղամիշի դէպքերի պատճառով Ատրպատականի զօրամասին կարգադրւում է ընդհանուր նահանջ։ Նահանջը տեղի է ունենում մի օրւայ ընթացքում և քրիստոնեայ ազգաբնակութեան ստաջարկւում է գաղթել զօրքի հետ միասին դէպի Զուլֆա։ Դարերից ի վեր խաղաղ և ճոխ ապրած այդ տեղի քրիստոնեայ տարրը, ստիպուած թողնում է իւր կալքն ու հարստութիւնը, սոսկալի տանջանքներով, ճանապարհին մեծ քանակութեամբ՝ բուքին, ձիւնին, ցեխին ու սովին զոհեր տալով՝ 6-7 օրւայ ընթացքում հասնում է Զուլֆա։ Այդ տեղ կուտակւում են մօտ 44,000 գաղթականներ, որոնցից 24,000-ը հայեր, գաղթած՝ Թաւրիզից 3000, Խոյից 2000, Սալմաստից 15,000, Ուրմիայից 4000, իսկ մնացած 20,000-ը ասորի և այլ քրիստոնեաներ, դարձեալ նոյն վայրերից։ Գաղթի հէնց սկզբի օրից թէ ռուսական, թէ կաթոլիկ, թէ բողոքական և թէ ասորոց հոգևորականներն ու գործիչները թողնելով իրենց ժողովուրդը դժոխային տանջանքների մէջ անտէր, անցնում են Ռուսաստանի խորքե-

ը։ Մնում է միայն Ատրպատականի Հայոց Թեմական Առաջնորդ Տ. Ներսէս եպիսկոպոս Մելիք-Թանգեանը, որը իւր վրայ է վերցնում, առանց դատանքի խարութեան, գաղթականութեան բոլոր կարիքների հոգացողութիւնը։ Մի քանի օր անցած նրան օգնութեան է գալիս՝ Թիֆլիսի Հայոց Կենդրոնական Կոմիտէի ներկայացուցիչ Ա. Շարաֆեանը, քիչ յետոյ Բագուայ Հայոց գաղթականական ներկայացուցիչ Գ. Պապեանը, Թիֆլիսի Պարսկահայ Կոմիտէի ներկայաց. Ա. Յարութիւնեանը և յետոյ Բագուայ Հայոց Կուլտուրական Միութեան բժշկական խումբը բժ. Ա. Աւետիսեանի ղեկավարութեամբ։ Ամբոխին սահմանը անցկացնելուց յետոյ, մինչև Յունուար 10-ը. բաժանում է հայ, մեծ մասը հանգանակուած շրջակայ հայ գիւղերից, մասամբ էլ պատրաստուած տեղական փուռերում։ Գաղթականութեան մեծ մասը անցնում է Ռուսաստանի զանազան քաղաքները, իսկ 15,000-ի չափ Երևանի և Նախիջևանի ու Շարուր-Դարալագեազի գաւառները։ Յունուար 10-ի վերջի էտապի հետ տեղափոխում է Տ. Ներսէս Սրբազանը իր օգնականներով՝ Նախիջևան։ Նոյն օրը Նախիջևանում կայանում է ժողով, մասնակցութեամբ՝ Երևան. նահանգապետի, Կովկասեան գլխաւոր կոմիտէի ներկայացուցիչ Ա. Պաւլովի, տեղական գաւառապետի և այլ պաշտօնեաների։ Նահանգապետի և Պաւլովի առաջարկութեամբ Նախիջևանի ու Շարուր-Դարալագեազի Եպ. Օգնութ. Կոմիտէի նախագահ է ընտրուում Ներսէս եպիսկոպոսը։ Ժողովի երկրորդ օրը միջոցներ ձեռք առնուեցին և մի քանի օրուայ ընթացքում բոլորին էլ տեղաւորեցին Նախիջևանի ու Շարուր-Դարալագեազի 69 հայաբնակ գիւղերում։

Կոմիտէի տրամադրութեան տակ եղած գումարները շատ չնչին էին. հազիւ հնար էր իւրաքանչիւր շնչին տալ օրական 5-ական կոպէկ հացի համար, բայց տեղացի հայ

գիւղացիութիւնը չէր զլանում լրացնելու պակասորդը, տալով գաղթականներին ընակարաններ, վառելիք, լուսաւորութիւն և այլ յարմարութիւններ. նոյնիսկ ահագին տարածութեան վրայ գտնուող գիւղերից ձիերով ու գրաստներով գալիս տանում էին իրենց գիւղերը և յարմարութիւններ տալիս։

Տեղաւորելուց անմիջապէս յետոյ ցուցակագրութիւն կազմուեց, որի համաձայն 69 գիւղերում տեղաւորուածների թիւը 8500-ի էր հասնում, որոնցից 2500-ը տասի և այլ քրիստոնեաներ, իսկ մնացածը հայեր։

Սալմաստի շրջանի հայերի շարժական գոյքի վնասը 6 միլիոնի էր հասնում, ճանապարհին մեռած ու կորածների թիւը 205-ի. Ուրմիայինը, չ'հաշուած հայ վաճառականութեան կրած խոշոր վնասները, 3 միլիոնի, կորած ու մեռածների թիւը 103-ի, Խոյի շրջանի նիւթական վնասը 100,000-ի, մեռած ու կորածների թիւը 17-ի։

Նպաստի հարցը գնալով աւելի սուր կերպարանք էր ստանում, չնայած Ներսէս եպիսկոպոսի անվերջ գիմումներին, այնուամենայնիւ նպաստի քանակը 5 կոպէկից չէր բարձրանում, իսկ կարիքը հետզհետէ աւելի մեծանում էր։ Նպաստիպուած էր լինում շրջել բոլոր գիւղերը և կոչ անել տեղացիներին հնար եղածը կիսելու գաղթականների հետ։

Նոյն նպատակով անցաւ Սիսիանի շրջանի հայ գիւղերը, որտեղից 1000 ռուբլու չափ փող և ալիւր հանգանակեց։ Այդպիսի միջոցներով մի կերպ հնար եղաւ գաղթականութեան անհրաժեշտ պէտքերը հոգալ մինչև վերադարձը Յուլիս 1 1915 թ.։

Ինչ վերաբերում է բժշկական օգնութեան, դա արդէն սկզբի օրից դրուած էր որոշ կարգով. Բագրատ Հայոց Կուլտուրական Միութեան բժշկական խումբը, բժ. Ա. Ա. Սահակեանի ղեկավարութեամբ շրջում էր գիւղերը, իսկ Զա-

հուկ գիւղում նոյն Միութեան հաշւին բացուած էր Ֆելդշերական կայան։ Բացուած էին նաև երեք ուրիշ Ֆելդշերական կայաններ, երկուսը Նախիջևանի շրջանի համար, մէկը Շարուր-Դարալագեազի։

Նախիջևանի քաղաքային հիւանդանոցն էլ «Կարմիր Խաչ»-ի Ընկերութեան միջոցներով գրուած էր Կոմիտէի տրամադրութեան տակ։ Բարեբաղդաբար հիւանդների թիւը շատ քիչ էր լինում և եղած բժշկական խումբը հնարաւորութիւն էր ունենում ժամանակին օգնութիւն հասցնել։ Ընդամենը Դեկտ. 23-ից սկսած մինչև Յուլիս 1-ը Նախիջևանի, Շարուր-Դարալագեազիև Մակուայ շրջաններում, վերջինս էլ Կոմիտէի հսկողութեան տակ էր գտնում, եւ եք հայաբնակ գիւղերում տեղաւորուած էին 300 հոգի, փախած Ալաշկերտի շրջանից. մահացութեան տոկոսը 4-ից չի բարձրացել, այն էլ սկզբնական շրջաններում, այդ տոկոսի մեծ մասը կազմում էին տասրիները։ Տարափոխիկ հիւանդութիւններ տեղի չեն ունեցել, եղել է դիզենտերիա և մասամբ էլ սրովալնային տիֆ, որոնք երկար ժամանակ չեն տևել։

Ապրիլ վերջերին Սալմաստի երկրորդ գրաւումից յետոյ, Ներսէս եպ-ը Կոմիտէի անդամների հետ անցաւ Խոյ. Սալմաստ և Ուրմի գրութեան և պալմանների հետ ծանօթանալու, որպէսզի գաղթականութեան վերադարձը կազմակերպի։ Մոռացաւեց յիշելու, որ Սալմաստի առաջին գրաւման ժամանակ Խոյի փոխ-հիւպատոս Վ.Վիդենոկին անցնում է Խոյից Սալմաստի շրջանը՝ համաձայն Ներսէս եպ-ի ստացած հեռագրի, և այնտեղից հաղորդում է, որ ինքը եկել է Սալմաստ, արհաւիրքի ժամանակ մնացած քրիստոնեաներից սպանուածների դիակները թաղելու, որոնց դուրս է բերում ջրի հորերից և փլատակների տակից։ Գրում է նաև, որ Կոմիսիա է կազմում իր նախագահութեամբ և ամբարել է տալիս պարսիկների մօտ գտնուած

քրիստոնեաներից կողոպտած իրերը, և նկարագրում գիւղերի աւերածութեան և կարիքների մասին։ Սպանուածների թիւը նա 400-ից անց է հաշուում, տարրական տընտեսութիւնը վերականգնելու համար գտնում է անհրաժեշտ 660,000 ր.։ Մայիս կէսերին շրջող խումբը հասնում է Խոյ, ուր ժողովուրդը, միւս շրջանների համեմատութեամբ այնքան էլ տուժած չի լինում, գտնելով գաղթականական վերջին կէտում և սահմանագլխին մօտիկ վայրում, ժողովուրդը հնարաւորութիւն է ունեցած լինում քիչ զրկոդութեամբ սահմանը անցնել, տանելով տնային իրերի մի մասը, նաև անասուններ, իսկ մնացածը հարևան պարսիկներին պահ տալ։ Այդ տեղ կազմում են գիւղական խասը յանձնաժողովներ՝ Ռուսաց հիւպատոսի և պարսիկ դատաւորի հսկողութեամբ, որ պահ տրուած իրերը պարսիկներից համերաշխութեամբ յետ ստացուեն։

Անցնում են Սալմաստի շրջանը։ Հիւպատոսի կազմած Կոմիսիան երկրորդ նահանջի ժամանակ քայքայուելիս է լինում, ամբարուած իրերը կրկին կողոպտուում են պարսիկների կողմից։

Ատրպատականի զօրամասի հրամանատարի մօտ ժողով են կայացնում և ընտրում խասը կոմիսիա հրամանատարի և պարսիկ դատաւորի հսկողութեամբ, որոնք կոչ են անում պարսիկ ազգաբնակութեան իրենց կամքով վերադարձնել կողոպտած իրերը։ Կազմելով, տեղական տեսակների հիման վրայ, շրջանի տնտեսութիւնը ամենատարրական կերպով վերականգնեցնելու ծրագիրը, անցնում են Ուրմիայի շրջանը։

Ուրմիայի շրջանը գտնում են աւելի վատթար դրութեան մէջ։ Այնտեղի ամերիկական միսիան, տաճիկների տիրապետութեան օրօք, պատսպարելիս է եղել 16,000 ասորիներ և 300 հայեր, որոնք կերակրուել են միսիայի մի-

ջոցներով։ Զանազան վայրերում պարսիկ խաների մօտ թագ-
նուած են եղել 2000-ի չափ հայեր և։ Ճաճիկների բար-
բարոսութիւններից սպանուել են 1000-ի չափ տղաներ,
և 25 հայեր, և տարափոխիկ հիւանդութիւններից և բը-
ծաւոր տիֆից մեռել են 4,000 տղայ և 20 հայ։ Այդ շըր-
ջանումն էլ Նոյնպիսի կոմիսսիա է կազմակերպում անտե-
սութիւնը վերականգնելու ծրագրով։

Համաձայն ելեք շրջաններից բերած տեսակների, այդ
վայրերում ամենատարրական տնտեսութիւն վերականգնելու
նպատակով սկզբնական շրջանի համար, որպէս տուն, ան-
հրաժեշտ է համարում 200,000 ր. Կոմիտէն որոշելով ներ-
գաղթի հարցը, այդ շրջանում տեսցուած գումարների և տաք
շորերի ու գործունէութեան մասին մամուլի և տանձին տպա-
գրուած թերթերի միջոցաւ հրապարակային հաշիւ է ներ-
կայացնում հետևեալ կարգով՝ 1914 թ. Դեկտ. 23-ից մինչև
1915 թ. Յունիս 30-ը — մուտք եղել է 139,219 ր. 88 կ.
ելք՝ 97,899 ր. 96 կոպ. դրամարկղում առձեռն գումար
41,319 ր. 15 կոպ.։

Գաղթականներին վերադարձնելով Կոմիտէն իւր
կազմով 1915-ի յուլիս 1-ին տեղափոխում է Սալմաստի
շրջանը, կենդրոն ընտրելով Հաֆթուան Հայկական գիւղը։
Կոմիտէի հետ տեղափոխում է նաև Բագաւ Հայոց Կուլ-
տուրական Միութեան բժշկական խումբը՝ հանդերձ բուժա-
րանով՝ բժ. Աւետիսեան Ս.ամի գլխաւորութեամբ։ Վերաշի-
նութեան համար պահանջելիք 200,000 ր. տանսի դի-
մաց կոմիտէն ունենալով մօտ 42,000 ր., որոշում է եղած
գումարի համաձայն օգնութիւն հասցնել միմիայն այն ըն-
տանիքներին, որոնք ոչ մի կերպ հնարաւորութիւն չէին
ունենալ իրենց գոյութիւնը պահպանելու և ցանքսը հաւա-
քելու՝ առանց կոմիտէի օգնութեան։ 1915 թ. Յուլիսի
վերջերին սկսում է Վանի գաղթը։ Փախստականները երկու

գծերով (Խոշաբի և Սարայի) գալիս են Սալմաստ և Խոյ, որոնք մօտ 6500 հոգի Վանի, Շատախի, Մոգոի, Կարճկանի և Կաւկաբի շրջաններից գալիս են Զուխա-Գադուկից, Բաշկալէից մինչև Աղբակի Ս. Բարդուղիմէոս Առաքելի վանքը, տեղաւորւում գետերի ափերին, իսկ 2500 հոգի Սարա—Կոթուր գծով գալիս են դէպի Խոյ: Որոշւում է ունեցած գումարներով անմիջապէս օգնութեան հասնել թէ Աղբակ և թէ Խոյ:

Նարեկների դրութիւնը շատ ծանր էր: Ճանապարհին Ղարա-Պարայի ձորով անցնելիս Մլանցի և Մկուրցի քրդերը, որոնք իրենց հպատակութիւնն էին յայտնել Ռուսաց կառավարութեան, յարձակւել էին նոցա վրայ, և սպանել ու վիրաւորել 600 հոգի, կողոպտել էին գաղթականների հետ եղած 10,000 գլուխ անասունները և մեծ քանակութեամբ տնային իրեր: Թալանի մասին հեռագրւեց անմիջապէս դրծող իշխանութիւններին, որոնք միայն քառակնացան թալանը յետ դարձնելու խոստումներով: Այդ անոպասելի դաղթի պատճառով սկսեցին Սալմաստ յետ գալ՝ 500 հոգի հայեր Զուլամերիկի շրջանից, 2,000 Աղբակից, 1500 Գեաւառից:

Որոշեց Խոյ հասածներին էլ տեղաւորել Սալմաստի գիւղերում, բացի այդ՝ Խոշաբի և Բաշկալէի շրջան են հասնում Վանի և միւս շրջաններից փախած 6500 հոգի ևս, որտեղ նոյնպէս Սալմաստի կոմիտէն հայցնում է թէ նիւթական և թէ բժշկական օգնութիւն: Խոշաբի և Բաշկալէի շրջան հասածներին որոշեց կենդրոնացնել Բարդուղիմէոս Առաքելոյ վանքի շրջանում, յուսալով մօտ ապագայի վերադարձման հնարաւորութեան: Բայց Վանի դրաւումը լինելով փոփոխական և նկատի ունենալով դրութեան անորոշութիւնը, միւս կողմից էլ ցրտերի սկսելը, որոշւում է Սեպտեմբերի վերջերին նոցա ևս տեղափոխել Սալմաստ ձը-

մեռը անցկացնելու։ Սալմաստում հնարաւորութիւն է տրուում բոլորին տեղաւորելու 18 հայաբնակ գիւղերում և ըստացած գումարներով օգնելու նրանց։ Նոյեմբեր 15-ից յետոյ սկսում է պետական նպաստի բաշխուիլը, մեծերին 6 ր. փոքրերին 3 ր. ամսական։

1915 թ. Յուլիս 1 ից մինչև 1915 թ. Դեկտ. 31-ը (45 օրուայ ստացած պետական նպաստով) մուտքը եղել է 194,513 ր. 18 կոպ. ելքը՝ 170,341 ր. 86 կոպ.։ Մնացել է առձեռն գումար 24,171 ր. 32 կոպ.։ Հաշուետուութիւնը տեղի է ունեցել թէ մամուլի միջոցով և թէ տուանձին թերթիկներով։

Երջանում այդ համախմբումների շնորհիւ սկսում են խոլերայի և ուրիշ հիւանդութիւնների նշաններ երևալ. բարեբաղդաբար այդ տևում է 15-ից 20 օր միայն, որի ընթացքում մեռնողների թիւը հասնում է 100-ի։ Կոմիտէն մի շարք դիմումներ է անում զանազան բարեգործական ընկերութիւնների՝ բժշկական օգնութիւն խնդրում, որի հիման վրայ Թիֆլիսի Հայոց Կենդրոնական Կոմիտէն ուղարկում է բժշկական խումբ բժ. Վ. Յովհաննիսեանի ղեկավարութեամբ։ Խումբը շրջում է 2 ամիս, որից յետոյ Քաղաքների Միութիւնը իւր վրայ վերցնելով բժշկական խնամքը, խումբը Կենտրոնական Կոմիտէից անցնում է Քաղաքների Միութեան հաշուին, որը բացում է՝ 100 մահճ. հիւանդանոց վարակիչ հիւանդութիւնների մասով և բուժարան՝ Հաֆթուանում. բացի այդ՝ խմբին գիւղերը շրջելու հնարաւորութիւն տուեց բժշկական օգնութիւն հասցնելու համար։

Աղբակում բժ. Վ. Յովհաննիսեանը Քաղաքների Միութեան հիւանդանոցի ճիւղ է բաց անում Բարգուղիմէոս Ա. աթաբեալի վանքում 25 մահճակալով, ուր խնամում են հայ և ասորի հիւանդ գաղթականներին և վի-

բաւոր գինուորներին։ Բժիշկը 1916 թուի ամառը բացում բծաւոր տիֆի համար ամանձին հիւանդանոց, այնուհետև՝ խոլերայ երևալուն պէս երկու բարակ՝ Հաֆթուանում և Դիեբում, և կազմեց ըբժշ. 2 թռուցիկ խումբ Սալմաստ և Դիեբ։ Բուժարաններում 1915 Նոյեմ.-ից մինչև 1916-ի Դեկտ.-ը բուժել են 15,000-ից աւելի հայ և ասորի հիւանդներ, հիւանդանոցում եղել են 5000 հոգի հայ և ասորի։

Կոմիտէի բազմակի դիմումների հիման վրայ գալիս է Պետրոգրադի Հայոց ընկերութեան կողմից Տատիանա Նիկոլաևնայի կոմիտէի միջոցներով կազմակերպուած խումբը, գաղթականներին օգնող երկու բժիշկ և մէկ բժշկուհիով, Ս. Տիգրանեանի ղեկավարութեամբ, որը բացում է Ղալասարում հիւանդանոց դեղատնով, 12 մահճակալով և երկու բուժարաններ Փայաջուկ և Մահլամ գիւղերում. բացում է նաև որբանոց մանկական պարտէզով 15 որբերի համար, տիկին Մ. Տիգրանեանի հսկողութեամբ։ Նաև բացում է Սալմաստում դպրոցներ հետևեալ գիւղերում՝ Հաֆթուան, Ղալասար, Փայաջուկ, Սանամերիկ և Սարա, հոգալով նրանց բոլոր պէտքերը։ Բանում է Աղբակում դարբնոց և հիւսնոց և Ղալասարում չորս արհեստանոց, դարբնի, հիւսնի, կօշկակարի և կաշեզործի, որոնք արժան գներով կամ ձրիաբար ժողովրդի պէտքերը հոգում են։

Կոմիտէի օգնութեամբ պահպանում են դպրոցներ, Սալմաստի հետևեալ գիւղերում՝ Սառնա, Քօհնաշհար, Ախախանա, Ղզլջա, Ղարաբաղ և Աղբակի Ս. Բարդ. վանքում և մանկական պարտէզ Հաֆթուանում։ Բոլոր դպրոցներում աշակերտուհիների թիւն է 1200, ուսուցիչուհիների թիւն է 26։

Աղբակի 15 գիւղերը իրանց հինաւուրց Ս. Բարբուղ. վանքի հետ վերաշինեցին։ Գիւղացիները ստացան Մխիթեան լիազօր Գ. Վարդանեանի, Վարդան Առաքելեանի և

Ս. Տէր-Մկրտչեանի ձեռքով՝ 160 լծկան և 2500 փութ սերմացու։

Ազբակի քուրդ գիւղացիների և հայերի յարաբերութիւնը աւելի բարեկամական է քան լեռնացի քրդերինը. բացի այն, որ 1896-ի քրդացած բոլոր հայերը մօտ 400 հոգի յետ դարձան իրանց մայրենի եկեղեցու ծոցը, այլև իսկական քրդերից շարունակում են գալ և մկրտել ու ցրել հայ գիւղերը տպրելու համար. մինչև այսօր մկրտուած են 150 հոգի, ցանկութիւն են յայտնել զանազան շրջաններում մկրտելու մօտ 400 հոգի։ Քրդուհիները մեծ պատրաստակամութեամբ պատկում են հայերի հետ. քանի դէպքեր եղան, երբ քրդուհիները մերժեցին իրանց ազգականների խնդիրը՝ յետ դառնալու իւրայիններին մօտ և ուրախութեամբ ամուսնացան հայերի հետ։

1916-ի աշնան մինչև Դեկտեմբերի վերջը Խոյի, Սէյդավարի, Շորաբի, Դիզայի և Կոթուրի հայութիւնը լրիւ տպրում էր իր գիւղերում, մօտաւորապէս 2000 հոգի, ցանքսեր արել են բոլորը և այն վիճակումն են ինչպէս պատերազմից առաջ։

Կոմիտէն դպրոցներ բացել է Խոյ, Սէյդավար, Շորաբ և Դարաշամբ։

Սալմաստի 18 հայաբնակ և խառը գիւղերում ցանքսեր եղել են մօտ 30,000 փթաչափ, սերմացու գնել են իրանք և մասամբ Տատիանի Կոմիտէն։

Մեր Կոմիտէն մի քանի անգամ նպաստներ է բաշխել տեղացիներին։ Սալմաստի բնակիչները, որ համարում են 12,000-ից աւելի, մեծ մասամբ դեռ Կովկասումն են, հազիւ $^1/_3$ մասը Սալմաստ վերադարձած լինի։

Նոյն գիւղերում տպրում են մօտ 6400 հայ գաղթականներ, որոնցից 4000-ը ամառը գնացել էին Վան, և ցրուած տասրի գաղթականներ՝ մօտ 10,000 հոգի։ Գաղթականները ստանում են պետական նպաստ։

Ուրմիոյ շրջանի հայերը մօտ 5000 հոգի, համարեա իրանց գիւղերումն են և պարապում են սովորական զբաղմունքներով։ Կոմիտէի օժանդակութեամբ դպրոցներ բացուած են Ուրմիայ քաղաքում և Գարաջալի, Գեարտապատ, Նախիջևան-Թափա, Ռահուա, Դիկալա և Բաբատուգիւղերում։ Նոյն գիւղերում և տպրում են 1000 շունչ Սուլդուզի գաղթականներ։

Մարագայ են կենդրոնացած Թաղիապատի, Սոփուջբուլաղի և Միանդուապի հայերը, որոնց համար բացուած է դպրոց խաւը տեղացիների հետ։

Պատերազմի պատճառով երկրի անորոշ դրութիւնը ստիպել ուեց եղած որբերին ուղարկել Կովկաս, պատսպարելու Դիլիջանի և Նախիջևանի որբանոցներում, որոնց թիւը եղել է 250-ից աւելի։

Թէ տեղացիների և թէ գաղթականների դատական խնդիրները իրար և օտարների հետ վարել է Կոմիտէն Հայոց և տեղական սովորոյթի իրաւունքների հիման վրայ։ Խաւը և լուրջ դատերը տեսնել են հիւպատոսի և պարսիկ նահանգապետի հետ միասին, իսկ գիւղերում ծխական խորհուրդը տանուտէրերի հետ։ Շատ անգամ խոպաղ քրիստոնեական գիւղերին տուել է մի-մի պահապան պաշտպանութեան համար իրանց խնդրանքի համաձայն։

Գաղթականների հոգևոր պիտոյքները կատարել են գաղթական և տեղացի քահանաները։ Պակներ եղել են շատ աւելի քան սովորական ժամանակ, նկատելով որ տրդամարդկանց թիւը շատ աւելի պակաս է կանանց թիւից։ Ամուսնութեան գէպքերի մէջ պատահում են ակամայ կրկնակի պակներ ճակատագրական անողոքելի պարագաների պատճառով, ըստ որում կանայք պնդում են, որ իրենց առկար ամուսինները սպանուած են, պէտք է պակեն, իսկ տղամարդիկ՝ որ իրենց կանայք գերութեան մէջ կտրուած

են ուստի պէտք է պատկեն, որից ծագում է երկ-կին պահելու և երկ-մարդ ունենալու հարց, որը լուրջ է և առանձին եկեղեցական օրէնսդրական կարգի կարօտ։

Կոմիտէն ստացել է բացի դրամականից նաև ալիւր՝ 1000 փ. Երևանի նահանգական Կոմիտէից, 1000 փ. Ցըփ-խիսի քաղաքային Վարչի Ընկերութիւնից, 2000 փ. թխած հաց Նախիջևանի հայ գիւղացիներից, 150 փութ ալիւր և ցորեն Սիսիանի հայ գիւղերից։

Հանգերձեղէն և անկողին ստացուած են Բաքւի և Տփխիսի հայ կոմիտէներից, Տփխիսի Հայ Կանանց Կոմիտէից, Զէմսկի Սաուզից, Երևանի նահանգական Կոմիտէից, Թէհրանի Հայ Կանանց (Կարմիր Խաչի) Կոմիտէից, Թէհրանի Ամերիկական օրիորդաց դպրոցի խմբից, Թաւրիզի Հայ Կանանց Կոմիտէից։

Թէ նպաստները և թէ հագուստեղէնը բաժանուած են Նախիջևանի և Շարուր-Դարալագեազի գաւառներում, Մակուում, Խոյում, Կոմուրում, Սալմաստում, Աղբակում, Ուրմիայում, Սուլդուզ-Սոգուջբուլաղ-Միանդուապի շրջանի հայերին, Մարաղայում և Թաւրիզում։

Նախիջևանում Կոմիտէի անդամներն էին՝ Սիսոն վարդապետը, գաւառապետը, 4 հաշտարար միջնորդներ, հարկային տեսուչը, գաւառական բժիշկը, Ռուսաց քահանան, Նոտարիուսը, Արշակ Մովսէսեան, աւագ ուսուցիչ Մամիկոն Յովհաննիսեան, բժ. Ա. Սաեթիսեան, Շմաւոն Յովսէփեան, Գէորգ Շահնազարեան, Ա. Յարութիւնեան, Ա. Տէր-Յակոբեան. նախագահութեամբ Տ. Ներսէս Եպիսկոպոս Մելիք-Թանգեանի և քարտուղարութեամբ Մամիկոն Մելիքսեդեկեանի։

Սալմաստ փոխադրելուց յետոյ աւելանում են Վահրամ Վարդ., Պետրոս Վարդ., բժ. Վ. Յովհաննիսեան և ուսուցիչներ՝ Ա. Աղաբէկեան, Թ. Զօհրաբեան և Յ. Գիւլանեան։

Կոմիտէն թէ Սալմաստում, թէ Խոյում, թէ Ուրմիայում, թէ Սղբակում անուշագիր չի թողել և ասորի գաղթականներին, տեղաւորելով հայ գիւղերում, դատերը վարելով և ըստ հնարաւորութեան օգնելով գրամով և հագուստով։ Ասորի գաղթականները եկել են Զուլամերիկից և Գեաւառից, ընդհանուր թիւը երեք շրջաններում հասնում էր 30,000-ի։

Երկու տարեայ ընթացքում Կոմիտէն 5 անգամ գրաւոր հաշիւ է ներկայացրել հասարակութեան, թէ առանձին թերթերով և թէ լրագրերի միջոցով, այժմ տալիս է լիակատար հաշիւ 1914-ի Դեկտ. 23-ից մինչև 1917-ի Յունուարի 1-ը։ Բոլոր ծախսից փաստագրերը ուղարկուած են իրանց նպիրատուներին, իսկ պատճէնները մնում Կոմիտէի գիւանում։ Ըստ յետագայ հաշուեառութեան ընդհ. մուտք եղել է 1,110,451,53 կ., ելք եղել է 1,100,451,53 կ., առ մէկն Յունուարի 1917 ամի առ ձեռն գումար դրամարկղում 10,000 ռ., ընդհանուր մուտքի գումարից պետական նպաստ 628,475 ռուբ. 25 կ., Քաղաքների Միութիւնից հիւանդանոցների համար 123,300 ռուբ., Ս. Էջմիածնից 90,197 ռուբ., Տատիանեան Կոմիտէից 105,208 ռուբ. 12 կ. Կովկասի գլխաւոր կոմիտէից 56,000 ռուբ. մնացածները այլ և այլ հասատաութիւններից և անձինքներից է։

Հ.Խ.Հ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
S.S.R.A Публичная Библиотека
7/II 1922
ԵՐԵՎԱՆ, Мясникян
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

Чистый доходъ Императора, безъ Императ. фамиліи составляетъ 2½ процента съ капитала и имѣетъ дальнѣйшій ростъ, вслѣдствіе чего при оцѣнкѣ, принятой для 50-лѣтняго периода окончательнаго уравненія и учитывая Высочайшее распоряженіе отдѣлить 5% на учрежденіе и обезпеченіе Императорскаго Университета и Лицея, ежегодный доходъ равняется 1½ милліона, или 30,000 р.

Трудно теперь предвидѣть чистый доходъ отъ новаго предпріятія, но можно надѣяться, что при нормальномъ развитіи, онъ можетъ достигнуть 1½ милліона. Въ 1911-й годъ, 28-го апрѣля, 1917-й Высочайшій 1-ый Указъ о выпускѣ дополнительныхъ акцій Общества, для приобрѣтенія новаго, Чистый доходъ Общества составляетъ 1,110,161,58 р., при чемъ, если принять во вниманіе, что доходъ 1,100,161,58 р. на 4½% для выпуска 1911 года на 3½% для новаго выпуска 10,000 р., то доходъ достигнетъ 1,123,375 р. 25 к., Чистый доходъ Общества составляетъ 1,123,300 р., В. Государственныя Земельныя Ссуды 90,127 р., Земельный Банкъ 109,208 р. 12 к. Общій итогъ доходовъ 50,000 р. Дивидендъ и мы уменьшимъ Дивиденды и выдѣлимъ 5%.

ՀԱՇԻՒ

Հին-Նախիջևանի և Ջաբուր-Դարալագեազի ու Սալմաստի „ԵՂԲԱՅՐԱՑԱՆ ՕԳՆՈՒԹԵԱՆ ԿՈՄԻՏԷԻ“ 1914 թուի Դեկտ. 23-ից մինչև 1916 Դեկտեմբեր 31-ը

№№	ՄՈՒՏՔ	Բուր.	Կ.	ԾԱԽՔԻ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ԵՐԲ ԵՒ ՈՐ ՓԱՍՏԱՑԻՆ ԱՆԴՈՐԲԱԳՐՈՎ Է ՈՒՂԱՐԿՎԱԾ ՆԵՒԻՐԱՏՈՒԻՆ
1	Թաւրիզի Հայոց Ազգային Բիւրոյից. . .	3900	»	Յունիս 18, փոստ. անդ. № 145
2	Տփխիսի Հայոց Կենդրոնական Կոմիտէից . .	3000	»	Յունե. 28, փոստ. անդ. № 580
3	Կոմսուհի Ե. Ա. Վարանցովա Դաշկովից . .	5000	»	Իրենց յունե. 28, № 581 և 101.
4	Համառուսական Зем. Союз-ից . . .	7500	»	Յունե. 18 №№ 582, 102 և 125.
5	Գրիգորիյ աբեղայի ձեռքով վաճառած ալիւրից .	1400	»	Յունե. 28, № 583.
6	Զուլֆայի Հայ օֆիցերներից	110	10	Յունե. 28, № 580.
7	Բագուի Հայոց Կոմիտէից	6752	95	Փետր. 28, № 760.
8	Տիկին Իսկուհի Յակոբեանից (Մոսկվա) . .	1500	»	Մայիս 5, № 13.
9	Տ. Իսկուհի Յակոբեանից, ի յիշատ. Սրբուհի Ամատունու, Տ. Նեկտար և Հ. Թումանեանցների նուիրած	1000	»	Հոկտ. 4, № 718.
10	Երևանի Հայոց Բարեգործական Ընկերութիւնից	500	»	№ 103. Ապրիլ 2-ին
11	Կոմկ. Գլխաւոր և նրա ճիւղ Երև. Նահ. Կոմիտէից	56000	»	Նոյ. 2 №№ 741, 106, 655, 212, 235, 14, 18, 764, 118 և 151.
12	Ղազինի Հայոց Հասարակութիւնից . .	300	»	Ապրիլ 24, № 724.
13	Տփխիսի Պարսկահայ Կոմիտէից . . .	1000	»	Մարտի 30, № 105.
14	Բագուի Հայ Կոմիտէից 1 վագոն ալիւրի վաճառումից	2620	»	Ապրիլ 16, № 558.
15	Նախիջևանի Հայ Հասարակութիւնից : .	438	80	Մկ. Պոդ. յունիս 18, № 139.
16	Միսիանի Հայ գիւղերից	669	73	Մ. Զանփոլ. Յունիս 18, № 140.
17	Անդայտ տիկնոջից պ. Մ. Զանփոլադեանի միջոցով	100	»	Մ. Զանփ. յունիս 18 № 140.
18	Ս. Էջմիածնի Գլխաւոր Կարգադիր Կոմիտէից .	90197	»	Փետ. 25 № 335 մայ. 5 № 107 օգ. 3 № 253, սեպտ. 21 № 32,22 հոկ. 1 № 283, դեկ. 31 № 254, նոյ. 20 № 1117-1916
19	Մեշոկների վաճառումից	38	65	Մ. Զանփ. Յունիս 18, № 140.
20	Եղբ. Զանփոլատ-ից մի վագոն կրի վաճառումից	152	»	Մ. Զանփ. Յունիս 18. № 140.
21	Նախիջ. Հայոց ուսուց. խմբի ներկայացումից .	177	65	Մկ. Պոդ. Յունիս 18, № 139.
22	Մի ձիու վաճառումից	60	»	Մ. Զանփ. Յունիս 18, № 139.
23	«Նպաստամատույցի» վարչութիւնից . .	6500	»	Յունիս 23 № 222; Նոյ. 20 № 1118-1916
24	Նոր-Նախիջ. Գէորգ Կ.-ի և Գ. Զալխուշեանի միջոցով Ս. և Յ. Աւետեան Առևտրական տնից . .	2000	»	Նոյ. 2, № 2 և 3.
25	Կոմիտէի հայթայթած ցորենի և գարու վաճառքից	4833	69	Գնացքում գողացած, գողերը բռնուած են, պատարանը վճռել է առնել:
26	Խալի հիւպատոսից պետական նպաստ . .	1600	»	Յանձնուած է իրեն հիւպատոսին
	Փոխադրելի .	197350	57	

№№	ՄՈՒՏՔ	Բուր.	Կ.	ԾԱԽՔԻ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ԵՐԲ ԵՒ ՈՐ ՓԱՍՏԱՑԻՆ ԱՆԴՈՐԲԱԳՐՈՎ Է ՈՒՂԱՐԿՎԱԾ ՆԵՒԻՐԱՏՈՒԻՆ
	Փոխադրուած .	197350	57	
27	Քաղաքների Միութիւնի լիազօր Ս. Խատիսեանից	10000	»	Հոկ. 16, № 555 և նոյ. 6 № 22,23.
28	Քաղաքների Միութիւնից Հաֆիզանի և Դիէզրի հիւանդանոցների համար	123300	»	Օգստ. 14 № 750-757 և № 34-46 և ձեռքով յանձնուած Խալի զրասենեակին.
29	Սաշից (Դ. գում. կամաւորից) . . .	20	»	Դեկտ. 21, № 254.
30	Վ. Ն. Դունին Բարկովսկաց , . .	20	»	Հոկտ. 4. № 718
31	Պետրս. Հայոց հասար. ներկայացուցիչ Ս. Տիգրանեանից Տատիանին Կոմիտէի միջոցներից .	55208	12	յանձնուած է Ս. Տիգրանեանին.
32	Թէհրանի Ամեր. օրիորդ. դպրոցի խմբից 63 թուում.	189	»	Յանձնած է Թաւր. առաջնորդարանին
33	Թաւրիզի ռուսաց բանկից (300 թուման) .	900	»	յանձնուել է Թաւրիզի Հայ կանանց Կոմիտէին բաժանելու.
34	Լօնդօնի Լորդ Մէյրից Թաւրիզի Անգլ. հիւպ. միջոցով	16051	32	Կոմիտէի գիւանում (Թարգ. անպիսիրէն ուղարկել Լօնդօն)
35	Կոմիտէի հայթայթած ցորենի և գարու վաճառքից Սալմասաի գպրոցական ֆոնդ . . .	12762	»	Դրամը պահում է Թաւրիզի բանկում
36	Կոմիտէի հայթայթած յատուկ գումարներ .	3650	»	Տէրերին յանձնուած
37	Թաւրիզի Հայուհեաց կոմիտէից . . .	6531	67	Նոյ. 20, № 1114-1916
38	Թաւրիզի Հայուհեաց Բարեգործական Ընկ-ից. .	2000	»	Նոյ. 20. № 1113-1916
39	Թաւրիզի Հայուհեաց Բ. Ընկ-եան նախկին Վարչ-ից	173	60	Կոմիտէի գիւանում
40	Ռոստովից՝ Ուռանովից. հանգանակուած .	1720	»	Նոյ. 20, № 1115-1916
41	Մոսկվաբնակ Ղազար Յակոբեանից . .	1000	»	Բանկում Սուրբուզի համար պահած
42	Պետրս. Տատիանին կոմիտէից . . .	50000	»	Լրիւ չի ծախսուած
43	Մազանդարանից՝ հանգանակութիւն (160 թուում.)	1100	»	Սալմ. գպրոց. ֆոնդ. բանկում
44	Պետական նպաստ 1915-ի Նոյեմբերից մինչև 1916-ի Սեպտեմբեր վերջը	496475	25	Յանձնուած է պ. հիւպատոսին
45	Հոկտ. Նոյեմբ. Դեկտ. պետակ. նպաստ պիտի ստացուի	132000	»	» »
	Ընդհանուր մուտք .	1110~~541~~	53	
	Ընդհանուր ելք .	1100~~551~~	53	
	Սաձեռն մնումէ դրամարկղում առ 1-ն Յունուարի 1917 թիւ	10000	»	